

ՄԻՆԱՄՅԱՆ Մ.Ս.

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԲԱՐԵԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ազատ շուկայական տնտեսության անցման գլխավոր արդյունքը ինքնուրույն եւ արդյունավետ գործող տնտեսական համակարգի ձեւավորումն է, իսկ շուկայական տնտեսության անցման հիմնական ուղղություններից մեկը՝ արդյունավետ ոչ պետական հատվածի ստեղծումը: Մասնավորեցումը ոչ թե սեփականության ձեւի մեխանիկական փոփոխություն է, այլ ամենից առաջ՝ տնտեսավարող սուբյեկտների վարչաքաղաքական պատասխանատվությունից տնտեսական պատասխանատվության անցման գործընթաց: Նման անցման գլխավոր նպատակը ոչ միայն ազատ ձեռնբեղմների հնարավորություն ընձեռելն է շուկայական օրենքների շրջանակներում ընթացիկ տնտեսական խնդիրները լուծելու առումով, այլեւ իրենց գործելակերպի ռազմավարությունն ու մարտավարությունը որոշելը, կուտակման եւ սպառման քաղաքականությունը ինքնուրույն վարելը: Հետեւաբար, ԼՂՀ-ում շուկայական հարաբերություններին անցնելու գործընթացում մասնավորեցման ամբողջ աշխատանքները պետք է տարվեն համակարգված, բազմագործոն վերլուծության հիման վրա տարբերակված մոտեցում ցուցաբերելով առանձին ոլորտների ու ճյուղերի նկատմամբ, հստակեցնելով անցման փուլերը, ներդաշնակելով սեփականության ձեւի, դրա տիրապետման, տնօրինման եւ օգտագործման բնույթի փոփոխությունը տնտեսավարման համապատասխան ենթակառուցվածքային միջավայրի եւ մրցակցային հիմքերի ստեղծման հետ: Յուրաքանչյուր հանրապետություն յուրովի է իրականացնում սեփականաշնորհման գործընթացը ելնելով ազգային տնտեսության իրավիճակից, երկրի զարգացման ռազմավարությունից, տնտեսության ճյուղային եւ սոցիալական կառուցվածքներից, երկրի առարաքին եւ ներքին պարտքի մեծությունից, դրսից կատարվող ներդրումների չափից ու հեռանկարներից, պետությունից եկամուտների եւ ծախսերի հարաբերակցությունից, տեղական շուկայի տարողունակությունից, դրամավարկային քաղաքականության կայունությունից, երկրի աշխարհաքաղաքական դիրքից:

ԼՂՀ-ում սեփականաշնորհումը իրականացվել է երեք խոշոր ծրագրերի միջոցով՝ պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարական օբյեկտների, հանրային եւ պետական բնակելի ֆոնդի եւ հողի սեփականաշնորհման միջոցով: Սա էականորեն տարբերվում է ՀՀ պետական գույքի սեփականաշնորհման գործընթացից, որտեղ սեփականաշնորհման սկիզբը հողային բարեփոխումներն էին: Բացի դրանից, ՀՀ-ում սեփականաշնորհման գործընթացը իրականացվեց սեփականաշնորհման սերտիֆիկատների միջոցով, որոնք որպես վճարման միջոց էին համդիսանում ՀՀ քաղաքացիներին սեփականաշնորհվող պետական գույքի անվճար փոխանցման մեխանիզմի իրականացման համար:

1995թ. ընդունվեցին «Սեփականության մասին», «Պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման մասին» ԼՂՀ օրենքները, որոնց հիման վրա էլ ԼՂՀ առևտրի, հասարակական սննդի, բնակչության կենցաղային ապասարկման վարձակալված տարածքների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման 1995-1996թթ. ծրագիրը: Ծրագրի իրականացման համալի ձեւավորվել է կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման եւ ապապետականացման վարչությունը եւ համապատասխան մորմատիվային բազա: «Փոքր» օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման 1995-1996թթ. ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների համար լայնորեն կիրառվեցին ապապետականացման ձեւերը (վարձակալություն, լիազորագրային կառավարում):

1996թ. ընդունվեցին «Պետական եւ հանրային ֆոնդի սեփականաշնորհման

մասին» ԼՂՀ օրենքը եւ նրա կիրարկումն ապահովող մի շարք ենթաօրենսդրական փաստաթղթեր: Բնակարանային տնտեսության հետագա գործունեությունը պայմանավորվեց բնակֆոնդի սեփականաշնորհման գործընթացով եւ դրան զուգահեռ «Համատիրությունների մասին» ԼՂՀ օրենքի հիման վրա ստեղծված համատիրություններով: Ապալետականացման գործընթացը կարգավորելու նպատակով սահմանվեց վարձակալությամբ հանձնվող գույքի վարձակալական վճարի չափի որոշման կարգը: 1997թ. ապալետականացման եւ սեփականաշնորհման գործընթացը նպատակաւորվեց ԼՂՀ պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապալետականացման 1997թ. ծրագրի իրագործմանը: Այս ծրագիրը, ի տարբերություն նախորդի, ուներ ավելի որոշակի նպատակներ, հիմնախնդիրներ եւ ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների ու օբյեկտների ընտրության սկզբունքներ:

Ապալետականացման գործընթացը 1997թ. հիմնականում կիրառվեց խոշոր եւ միջին ձեռնարկություններում՝ դրանց ապամենաշնորհացման, կառավարման կառուցվածքային փոփոխման նպատակով եւ որպես սեփականաշնորհման նախապատրաստական փուլ:

1998թ. ԼՂՀ-ում շարունակվել եւ պետական գույքի մասնավորեցումը կանոնակարգող օրենսդրական դաշտի ընդլայնման եւ կատարելագործման աշխատանքները: Այս տարում ընդունվել են «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» եւ «ԼՂՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրի մասին» ԼՂՀ օրենքներն ու այդ օրենքներից բխող ենթաօրենսդրական ակտեր: Ելնելով սեփականաշնորհման ընթացքում ձեռք բերված փորձից, օրենքում մշակվել են պետական գույքի մասնավորեցման եւ զնահատման մեթոդների նոր մոտեցումներ ու ձեւեր:

ԼՂՀ պետական գույքի մասնավորեցման 1998-2000թթ. ծրագրում ընդգրկվել են էներգետիկայի, արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի, կոմունալ տնտեսության եւ այլ ճյուղերի պետական 105 ձեռնարկություններ, որից 48-ը նախատեսվում է մասնավորեցնել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձեւով, իսկ մնացած ձեռնարկությունները՝ ԼՂՀ կառավարության կողմից սահմանված ձեւերով: Սեփականաշնորհման եւ ապալետականացման նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերություններ, «փոքր» եւ անավարտ շինարարության օբյեկտները համարվում են 1998-2000 թվականների ծրագրի մաս եւ ենթակա են առաջնահերթ մասնավորեցման «Պետական գույքի մասնավորեցման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ձեւերով:

1998թ. ԼՂՀ-ում ընդունվեցին «Հողային օրենսգիրքը» եւ «Հողի սեփականաշնորհման մասին» ԼՂՀ օրենքները, որոնց կիրարկումը նպաստեց հողերի գիտականորեն հիմնավորված արդյունավետ օգտագործմանը, սեփականության բազմաձեւության հիման վրա տնտեսական բոլոր ձեւերի իրավահավասար զարգացմանը, քաղաքացիների, ձեռնարկությունների եւ կազմակերպությունների իրավունքների պահպանմանը, հողային հարաբերությունների բնագավառում օրինականության ամրապնդմանը:

Հողի սեփականաշնորհումը ԼՂՀ-ում համարում ենք ուշացած: Մինչեւ սեփականաշնորհման գործընթացը, տնտեսական բարեփոխումների ընթացքում ձեւավորված գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեությունը է ավելի քայքայեց արցախյան գյուղը՝ չնպաստելով գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, վերջնականորեն քայքայեց այդ տնտեսությունների տնօրինությանը թողնված մեքենատրակտորային պարկը եւ ժառանգությունը թողեց պետական բյուջեի ու կենսաթոշակային ֆոնդի հանդեպ կուտակված ահագին պարտքը:

Հողի սեփականաշնորհման արդյունքում այն գտավ իր տիրոջը. գյուղացու մոտ ձեւավորվեց սեփականատիրական մտածելակերպ, բարձրացավ պատասխանատվությունը հողի բերրիության, բերքի պահպանման եւ վերջնական

արդյունքի նկատմամբ, աճեց գյուղատնտեսության բնագավառում զբաղվածների թիվը: Սակայն պետության կողմից չեն մշակվել եւ չեն ձեւավորվել գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության սմբողջական քաղաքականությունն ու դրա բաղադրիչները, ներառյալ գյուղացիական տնտեսությունների մատակարարման, արտադրանքի իրացման, պետական ոլորտում մնացող ենթակառուցվածքի (ջրանցքներ, ջրատարներ, պոմպակայաններ) գործունեության, դրանց պահպանման ու զարգացման մոտեցումները: Հանգամանքներն հողի ազատ առք ու վաճառքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ սեփականության իրավունքի ազատ շրջանառության բացակայության պատճառով:

2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մասնավորեցման ծրագրերում ընդգրկված է 721 «փոքր» օբյեկտ, որից 142-ը՝ առևտրի, 14-ը՝ հասարակական սննդի, 99-ը՝ կենցաղային սպասարկման, 279-ը՝ վարձակալված տարածքներ, 44-ը՝ կիսավեր: Սեփականաշնորհված 578 «փոքր» օբյեկտներից են վարձակալված տարածքներից 168-ը սեփականաշնորհվել են աշխատավորական կոլեկտիվների անդամներին, 146-ը՝ աճուրդով, 264-ը՝ վարձակալներին, 2-ը՝ ուղղակի վաճառքի ձևով, 4-ը՝ անհատույց տրամադրման ձևով: Ըստ 1995-1996թթ. եւ 1998-2000թթ. ծրագրերում ընդգրկված «փոքր» օբյեկտների ծրագրային մասնավորեցման ցուցանիշների եւ դրանց կատարողականի վերլուծությանը ամենաբարձր կատարողականը արձանագրվեց վարձակալված տարածքների (99,3 %), կենցաղսպասարկման (87,6%) եւ առևտրի օբյեկտների (83,0 %) գծով: 2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 56 «փոքր» օբյեկտներ ներկայացված են աճուրդային վաճառքի, իսկ 34-ը գտնվում է մասնավորեցման ընթացքում: Եւ այն ժամանակաշրջանում «փոքր» օբյեկտների մասնավորեցումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 266,2 մլն դրամ, այդ թվում՝ 1995թ.՝ 8,3 մլն դրամ, 1996թ.՝ 49,7 մլն դրամ, 1997թ.՝ 54,3 մլն դրամ, 1998թ.՝ 53,1 մլն դրամ, 1999թ.՝ 49,6 մլն դրամ, 2000թ.՝ 51,2 մլն դրամ: Ուղղակի անհատույց տրամադրման ձևով մասնավորեցվել է 4 «փոքր» օբյեկտ, որից մեկը հանդիսանում է համայնքի սեփականություն: Նշված օբյեկտները մասնավորեցվել են ԼՂՀ Օրենսդրությամբ համապատասխան հաշվի առնելով գնորդների կողմից կատարվելիք ներդրումների ծավալները եւ ստեղծվող աշխատատեղերի քանակը, ըստ որի եւ նախատեսված ներդրումների ծավալի ու աշխատատեղերի քանակի գծով ցուցանիշները կատարվել են բացառությամբ Շուշիի «Կիսավեր շենքերի», որը դեռեւս ընթացքի մեջ է:

**1995-1996 եւ 1998-2000 թթ. ծրագրերում ընդգրկված
«փոքր» օբյեկտների ծրագրային մասնավորեցման
ցուցանիշները եւ դրանց կատարողականը**

«Փոքր» օբյեկտները ըստ նյութերի	Ծրագրով սահմանված օբյեկտների քանակը	Ենթակա են համան ծրագրից	Ծրագրում մնացող օբյեկտներ ի քանակը	ճատացի մասնավորեցված օբյեկտների քանակը	Կատարողականը (տոկոսներով)
Առևտուր	206	35	171	142	83.0
Հասարակական սնունդ	19	-	19	14	73.7
Կենցաղսպասարկո ւմ	128	15	113	99	87.6
Վարձակալված տարածք	281	-	281	279	99.3
Կիսավեր	87	3	84	44	52.4
ԸՆԴԱՄԵՆԸ	721	53	668	578	86.5

Ծրագրերից հանվել են մի շարք «փոքր» անավարտ շինարարության եւ կիսավեր օբյեկտներ՝ դրանց կարգավիճակը փոխվելու եւ հետեւյալ պատճառներով.

- չեն հանդիսանում պետական սեփականություն,
- ԼՂՀ կառավարության որոշումներով հանձնվել են բյուջետային հիմնարկներին կամ համայնքներին նպատակային օգտագործման համար,
- տարբեր պատճառներով քանդվել են եւ ներկայումս գոյություն չունեն,
- անավարտ շինարարության օբյեկտները կառուցվել եւ հանձնվել են չահագործման:

Ըստ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման ծրագրում ընդգրկված 27 անավարտ շինարարության օբյեկտներից հաշվետու ժամանակաշրջանում հանման ենթակա է 12-ը, մնացած 15 օբյեկտներից 6-ը մասնավորեցվել է, իսկ 9 օբյեկտ գտնվում է մասնավորեցման ընթացքում: Մասնավորեցված օբյեկտներից պետական բյուջե է մտցվել 7,8 մլն դրամ:

Այսպիսով, իրականացված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել.

- ձեւավորված են «փոքր» օբյեկտների եւ ընկերությունների մասնավորեցման իրականացման համար անհրաժեշտ իրավական մեթոդական եւ կազմակերպական դաշտերը,

- մասնավորեցման տեմպերը թույլ են տալիս կանխատեսել, որ «փոքր» օբյեկտների սեփականաշնորհումը կավարտվի 2001թ. ընթացքում,

- անավարտ շինարարության օբյեկտների եւ ընկերությունների մասնավորեցումը դանդաղում է ընակչության ցածր զնոդունակության, պահանջարկի սակավության, ընկերությունների խոշոր պարտքերի առկայության, հիմնական միջոցների մաշվածության օբյեկտների գործարկման համար խոշոր ներդրումների անհրաժեշտության պատճառով:

Այսօր ԼՂՀ տնտեսությունը կարելի է բնութագրել որպես բազմակացութեւ տնտեսություն, որտեղ առկա են սեփականության գրեթե բոլոր՝ անհատական, մասնավոր, խմբայինից մինչեւ խառն եւ բաժնետիրական ձեւերը: Ըստ որում, տնտեսության յուրաքանչյուր ճյուղում գերիշխում են այդ ճյուղին բնորոշ ձեւերը (գյուղատնտեսության մեջ՝ խմբային, կոլեկտիվ, արդյունաբերության մեջ՝ բաժնետիրական, խառն եւ այլն): Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ ԼՂՀ-ում սեփականաշնորհման գործընթացը ընթանում է տարերայնորեն, որոշ փուլերում՝ անհրաժեշտ հսկողությունից զուրս: Ավելին, մինչեւ այսօր գոյություն չունի սեփականաշնորհման գործընթացի լավ կամ վատ մշակված ռազմավարական, ամփոփ ծրագիր, որեւէ կերպ չի նախանշված սեփականաշնորհված կամ դրան ենթակա այս կամ այն միջին կամ խոշոր ձեռնարկության դերը ազգային տնտեսության զարգացման գործում: Արդյունքում անհաս են մնում ի սկզբանե հռչակված այն գաղափարները, համաձայն որոնց սեփականաշնորհման գործընթացը պետք է նպաստի տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, թողարկվող ապրանքների որակի բարելավման եւ քանակի ավելացման գործում սեփականատիրոջ անմիջական չահագրգռվածության մեծացմանը, սոցիալական արդարության հաստատմանը, բանինաց մասնագետներով արտադրության գործընթացի լավագույն կազմակերպմանը, տեղական արտադրության եւ արտահանման կարողության խթանմանը:

Սեփականաշնորհման գործընթացը, մասնավոր եւ կորպորատիվ սեփականության կայացման համար անհրաժեշտ օրենքների ընդունումը, ի վերջո, գործնականորեն չապահովեց սեփականության իրավունքի կիրառումն ապահովող համարժեք պայմանների ձեւավորումը, այն է՝ սեփականության իրավունքի հաշվառումը, պահպանումը, օտարումը եւ փոխանցումը: Սեփականության իրավունքը չստացավ շուկայական ինստիտուտների միջոցով արագ փոխանցվող արժեթղթավորված ձեւ, ըստ որի՝ անշարժ գույքի, այդ թվում՝ հողի սեփականության իրավունքը պետք է ձեւակերպվի սեփականությունը հավաստող, իր բնութքով փոխանցելի, հավաստագրի կամ արժեթղթի տեսքով, որի նկատմամբ կոնկրետ անձի սեփականության իրավունքը օրինական ուժ է ստանալու կադաստրի մարմիններում անշարժ գույքի (հողի) սեփականության վերաբերյալ համապատասխան գրանցում կատարելու պահից:

Ըստ էության, նոտարական վավերացմամբ կնքված գործարքի հիման վրա

կադաստրի մարմինը հավաստագրի վրա պետք է հնարավորին կարճ ժամկետում գրանցի սեփականատիրոջ անվանափոխությունը: Նշված մեխանիզմի կիրառումը պահանջում է ամբողջ անշարժ գույքի համապատասխան անձնագրավորում, ինչպես նաեւ կադաստրի մարմինների անհրաժեշտ գործելակարգերի մշակում, հողի սեփականության անհրաժեշտ բաղադրամասը կազմող գյուղատնտեսական եւ ոչ գյուղատնտեսական հողատարածքների կադաստրային գնահատման իրականացում:

Ծագող մյուս հիմնահարցը այն է, որ որեւէ լծակով չի խթանվում կամ ժամանակային առումով չի հստակեցվում ապապետականացված ձեռնարկության գործարկումը, անգամ պարտադիր պայման չի դրվում որոշակի ժամկետներում ապապետականացված ձեռնարկության բաժնետոմսերի թողարկման ու վաճառքի համար: Այլ կերպ, ներկայումս ստեղծված են սեփականաշնորհման օրենսդրական, տեսական հիմքերը, բայց չկա արդյունավետ ու նպատակային գործող մեխանիզմ, չի ձեւավորվել տնտեսական եւ մասնավորապես սեփականաշնորհման գործընթացի զարկերակը կազմող արժեթղթերի շուկան:

Այս պարագայում, բնական է, որ վերագործարկման ժամկետների եւ անհրաժեշտ հսկողության սահմանման բացակայության պայմաններում իրենց արժեքից ցածր գնահատված արտադրական կարողությունների նոր տներին ավելի ձեռնտու է մտահոգվել ոչ այնքան ուշնով չպարտադրված վերագործարկման ու արդյունքի ստեղծման, որքան ձեռնարկության եւ նրա առանձին մասերի ավելի ձեռնտու պայմաններով վերավաճառքի մասին: Սա առավել մեծ հնարավորություններ է ընձեռում հատկապես խորհրդանշական գներով, «ներքին կարգով» ոչ մրցութային սեփականաշնորհման ժամանակ, երբ ձեռնարկության մասնագիտացման պահպանումը ընդհանրապես անհրաժեշտ պայման չի հանդիսանում, իսկ բաժնետոմսերը կենտրոնացված են մեկ անձի կամ առավել շահագրգիռ խմբի ձեռքին: Որոշակի մեկուսացում ստեղծվեց նյութական բարքների արտադրության մեջ կենսականորեն շահագրգռված սոցիալական շերտերի, պետության կողմից մշակվող եւ իրականացվող տնտեսական քաղաքականության եւ դրա իրականացման անհրաժեշտ պայմաններից ապապետականացված արտադրական կարողությունների միջեւ: Մի շարք թերություններ կարելի է նշել նաեւ ներկայումս գործող սեփականաշնորհման ենթակա օբյեկտների գնահատման մեխանիզմում ու մեթոդներում: Չմայած օրենքով նախատեսված պատժամիջոցներին՝ սեփականաշնորհման գործընթացի ողջ ընթացքում սեփականաշնորհման գործարքների անվավեր ճանաչման ոչ մի դեպք չի գրանցվել, ինչը կասկածի տեղիք է տալիս: Բազմաթիվ թերություններ են գրանցվել նաեւ հողի սեփականաշնորհման գործընթացում:

Սեփականաշնորհման գործընթացում 1997-ում տեղ գտած թերությունները շտկելու եւ այդ պրոցեսի հետագա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք.

- մեծացնել պետության կարգավորիչ, վերահսկիչ դերը՝ մշակելով ազգային տնտեսության առաջնահերթություններից բխող սեփականաշնորհման ծրագիր,
- սեփականաշնորհվող օբյեկտի ախմական գնահատումն իրականացնել անկախ փորձագետների օգնությամբ,
- ապահովել գործարքների առավել թափանցիկություն, ինչպես նաեւ դրանց մասին բավարար տեղեկատվություն,
- լական աջակցություն ցուցաբերել արժեթղթերի շուկայի ձեւավորմանը,
- պահպանել ձեռնարկությունների մասնագիտացումը՝ այն ամրագրելով պայմանագրում,
- ապահովել աշխատողների առավել մասնակցությունը գործերի կառավարմանը,
- սեփականաշնորհումից ստացվող միջոցներով ձեւավորել պետական ներդրումային ֆոնդ՝ ռազմավարական նշանակության այս կամ այն ժյուլի արտոնյալ զարգացման, նպատակային արտադրական ծրագրերի իրականացման, նոր տեխնոլոգիաների ձեռքբերման նպատակով.

- արտոնություններ սահմանել աշխատող ձեռնարկությունների համար մասնավորապես, կիրառելով արտադրության հիմնական միջոցներից եւ անշարժ գույքից զանձվող հարկերի գրոյական դրույքաչափ գործունեության առաջին, որոշ դեպքերում էլ առաջին երեք տարում,

- սահմանել ժամանակային պրոգրեսիվ սանդղակով զանձվող գույքահարկ չաշխատող ձեռնարկությունների արտադրության հիմնական միջոցներից եւ անշարժ գույքից:

ԼՂՀ-ում մասնավորեցման գործընթացի հետագա ընթացքում առաջնություն պետք է տրվեն ներքին եւ արտաքին մասնավոր ներդրումների ներգրավմամբ, նոր աշխատատեղերի բացման հեռանկարով սեփականաշնորհման հայտերին: Միաժամանակ, հաշվի առնելով բնակչության ցածր գնողունակությունը՝ նախատեսվում է կիրառել մասնավորեցման այն ձեւերը, որոնք կապահովեն ներդրումների խթանումը, նպաստավոր պայմաններ կստեղծեն ձեռնարկությունների ֆինանսական առողջացման համար:

Мипася М.М.

**Особенности приватизации в системе
экономических реформ в НКР**

Резюме

Автор в статье изложил процесс приватизации и ее особенности в Арцахе. Анализировались недостатки объективного и субъективного характеров процесса приватизации, предлагались пути повышения эффективности дальнейших реформ в данной сфере.

Summary

In his article the author has shown the process of privatization and its peculiarities in Artsakh. She analysed the shortcomings of objective and subjective characters of the process of privatization, she also has suggested the ways of increasing the efficiency of further reforms in the given sphere.